Հավելված
ՀՀ կառավարության 2024 թվականի
հուլիսի 4-ի N 1016 - Ն որոշման

«Հավելված N 3
ՀՀ կառավարության 2023 թվականի
հունվարի 12-ի N 37-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ԿԱՊԱՐԱԿՆԻՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՄԲ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԵՏԱԳԾԵԼԻՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԱԶԳԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են, «Եվրասիական տնտեսական միությունում ապրանքների փոխադրման հետագծելիության նպատակով տեղորոշման կապարակնիքների օգտագործման մասին» համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին մասին և «Մաքսային կարգավորման մասին» օրենքի 321.1-ին հոդվածի 5-րդ մասին համապատասխան, ազգային օպերատորի գործունեության դադարեցման հետ կապված հարաբերությունները:

2. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի փետրվարի 3-ի «Եվրասիական տնտեսական միությունում տեղորոշման կապարակնիքների օգտագործմամբ ապրանքների փոխադրման հետագծելիությունն ապահովող ազգային օպերատորի ընտրության միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու, դրա կազմն ու աշխատակարգը հաստատելու մասին» N 112-Ա որոշման համաձայն ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) կարող է դադարեցնել ազգային օպերատորի գործունեությունը՝ «Մաքսային կարգավորման մասին» օրենքի 321.1-ին հոդվածի 1-ից 4-րդ մասերով սահմանված խախտումները ազգային օպերատորի կողմից մեկ ամսվա ընթացքում երկու անգամից ավելի կատարելու դեպքում:

3. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի համապատասխան ստորաբաժանումը, ազգային օպերատորի կողմից կատարված՝

սույն կարգի 2-րդ կետում նշված խախտումների վերաբերյալ որոշումներն անբողոքարկելի դառնալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում արձանագրված փաստերը ներկայացնում է հանձնաժողովին:

4. Հանձնաժողովը սույն կարգի 3-րդ կետում նշված տեղեկատվությունը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ազգային օպերատորին տրամադրում է ծանուցում, որտեղ նշվում են սույն կարգի 3-րդ կետում նշված փաստերը, ինչպես նաև տեղեկություններ՝ խախտումների ուսումնասիրության և գնահատման նիստի, այդ նիստի անցկացման վայրի, ամսաթվի, ժամի վերաբերյալ:

5. Հանձնաժողովը սույն կարգի 4-րդ կետում նշված խախտումների ուսումնասիրության և գնահատման նիստը գումարում է սույն կարգի 3-րդ կետում նշված տեղեկատվությունը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

6. Եթե սույն կարգի 4-րդ կետում նշված նիստին ներկայացված փաստերի ուսումնասիրության արդյունքում հաստատվում է, որ արձանագրված խախտումներն ազգային օպերատորի գործունեության դադարեցման հիմք չեն հանդիսանում, ապա կազմվում է եզրակացություն՝ ազգային օպերատորի գործունեության դադարեցման հիմքեր չլինելու վերաբերյալ:

7. Եթե սույն կարգի 4-րդ կետում նշված նիստին ներկայացված փաստերի ուսումնասիրության արդյունքում հաստատվում է, որ արձանագրված խախտումներն ազգային օպերատորի գործունեության դադարեցման հիմք են հանդիսանում, ապա կազմվում է եզրակացություն ազգային օպերատորի գործունեության դադարեցման վերաբերյալ:

8. Հանձնաժողովը կազմված եզրակացությունը մեկ աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով ներկայացնում է ազգային օպերատորին և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին:

9. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի համապատասխան ստորաբաժանումը սույն կարգի 7-րդ կետում նշված եզրակացությունը ստանալուց հետո երկու ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետու-

թյան վարչապետի աշխատակազմ է ներկայացնում ազգային օպերատորի գործունեության դադարեցման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ:

10. Ազգային օպերատորի գործունեության դադարեցման օր է համարվում սույն կարգի 9-րդ կետում նշված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված օրը:

11. Ազգային օպերատորի գործունեության դադարեցման օրվան նախորդող օրը ազգային օպերատորը պարտավոր է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի համապատասխան ստորաբաժանմանը տրամադրել տվյալ պահին իր մոտ առկա՝ Եվրասիական տնտեսական միությունում տեղորոշման կապարակնիքների օգտագործմամբ ապրանքների փոխադրումներին առնչվող ամբողջ տեղեկատվությունը:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

04.07.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ